

# ԱՐԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԱՐԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՂԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՏՈՐ 9  
2017

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվիրվում է արաբագիտության ամբիոնի դասախոսներ  
Սարգիս Պողոսյանի, Հովհաննես Ասատրյանի և Հարություն  
Գրիգորյանի լուսավոր հիշատակին

№ 9

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2017

YEREVAN STATE UNIVERSITY

JOURNAL  
OF  
ARABIC STUDIES

In the memory of  
Sargis Poghosyan,  
Hovhannes Asatryan,  
Harutyun Grigoryan

№ 9

ISSN 1829-4510

YEREVAN  
YSU PRESS  
2017

Հրատարակվում է  
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ

### **Խմբագրական խորհուրդ՝**

Դավիթ Հովհաննիսյան – ր.գ.թ., պրոֆեսոր (նախագահ)

Մարգարիտա Խաչիկյան - ր.գ.դ., պրոֆեսոր

Ռուբեն Կարապետյան - պ.գ.դ., պրոֆեսոր

Արշակ Փոլադյան - պ.գ.դ., պրոֆեսոր

Գուրամ Զիկովանի - ր.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)

Մամվել Կարաբեկյան - ր.գ.թ., դոցենտ

Մուշեղ Ասատրյան –PhD (Կանադա)

Սոնա Տոնիկյան – ր.գ.թ., դոցենտ

Մարատ Յավրույան - ր.գ.թ., դոցենտ

Հայկ Քոչարյան – պ.գ.թ., դոցենտ

Արայիկ Հարությունյան - պ.գ.թ.

Published by the decision of the scientific  
council of the Oriental Studies  
Department, Yerevan State University

## **Editorial Board**

Prof. David Hovhannisyan (editor in chief)

Prof. Margarita Khachkyan

Prof. Ruben Karapetyan

Prof. Arshak Poladyan

Prof. Guram Chikovani (Georgia)

Dr. Samvel Karabekyan

Mushegh Asatryan, PhD (Canada)

Dr. Sona Tonikyan

Dr. Marat Yavrumyan

Dr. Hayk Kocharyan

Dr. Arayik Harutyunyan

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ..... 11

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### *Աննա Դանիելյան*

ԶԵՂԶՈՒՄԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐԱԲԵՐԵՆԻ  
TAXFİF ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 13-27

†  
*Խաղիջե Ահմադ Մեհրաբի, Աննա Դանիելյան*  
ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՆԻԿԻ ԵՎ ՀԱՐԱԿՑՎԱԾ ԱՆՎԱՆ  
ԶԵՂԶՈՒՄԸ ՂՈՒՐԱՆՈՒՄ..... 28-46

### *Հայկ Հարությունյան*

ՀԱՐՖԸ՝ ՈՐՊԵՍ ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ  
ՄԱՍՆԻԿ ԱԼ-ԽԱԼԻԼ ԻԲՆ ԱՀՄԱԴԻ «ՔԻԹԱԲ ԱԼ-ԱՅՆ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 47-59

### *Մարգարիտա Մարգարյան*

ՄՈՒՆԻՍԻԿԱԿԱՆ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ  
ԶԵՎԱ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ..... 60-72

### *Մերվաթ Ջումա Արդալլահ Օսման*

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՄԲԶԲԱՂՎՈՂ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՔԵՆՈՒՆԿԱՐՆԵՐԸ..... 73-81

*Մերվաթ Ջումա Արդալլահ Օսման*

ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ.....82-97

*Նիկոլայ Գաբրիելյան*

ՄԱՍԴԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱԾԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆ

ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ.....98-106

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Արու Ջաիդ Ալի Մուսա*

«ՀԱՄԱՍ» ՇԱՐԺՄԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆԻ

ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԽԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՍԼՈՅԻ

ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.....107-131

*Անի Դավթյան*

«ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

ՄԻՐԻԱՅՈՒՄ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ

ԶԱԽՈՂՈՒՄԸ՝ ՎԵՐՁ ԴՆԵԼՈՒ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ

ՎԱՅԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.....132-139

*Արթուր Իսրայելյան, Ջարուհի Համազասպյան*

ԽԱԶԱԿՐԱՑ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԸ ՏԱՐՏՈՒՄԻ, ԼԱԹԱՔԻԱՅԻ

ՀԱՄԱՅԻ ԵՎ ՀՈՄՄԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ.....140-146

*Արսեն Ջուլֆալալյան*

ԱԴԱՆԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԹՈՒՐԳ-ՄԻՐԻԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 2002 Թ.....147-169

*Գայանե Մկրտումյան*

ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻՆ ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ.....170-183

*Էդիտա Ասատրյան*

ԵԳԻՊՏԱ-ՍԱՌԻՂԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՄԵՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԸ.....184-199

*Խաչիկ Ազիզյան*

ԵԳԻՊՏՈՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
ՍՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ  
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ.....200-218

*Մարիամ Էլմասյան*

ԱԲՂԱԼԼԱՀ ԻԲՆ ԱԼ-ՍՈՒԿԱՏԱՅԻ ԴԵՐԸ  
ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ.....219-235



## CONTENT

FOREWORDS.....	11-12
----------------	-------

## LINGUISTICS

*Anna Danielyan*

THE TERMS FOR DESCRIBING ELLIPSIS IN THE CONTEXT OF TAXF^F CONCEPTION IN ARABIC LANGUAGE.....	13-27
--	-------

*Khadijeh Ahmad Mehrabi, Anna Danielyan*

ELLIPSIS OF PREPOSITIONS AND PREPOSITIONAL CONSTRUCTIONS IN THE QUR'ĀN.....	28-46
--	-------

*Hayk Harutyunyan*

HARF AS PHONETIC AND MORPHOLOGICAL PARTICLE IN «KITAB AL-AYN» OF KHALIL IBN AHMAD.....	47-59
---	-------

*Margarita Sargsyan*

ABOUT THE MORFOSYNTACTIC AND SEMANTIC PECULIARITIES OF THE VERB-LIKE PARTICLE 'INNA.....	60-72
---	-------

*Mervat Juma Abdallah Othman*

THE ORGANIZATIONS WORKING ON THE ARABIZATION OF SCIENCES IN ARAB COUNTRIES AND THE PERSPECTIVES OF THE ARABIZATION.....	73-81
---	-------

*Mervat Juma Abdallah Othman*

HISTORIC MILESTONES OF ARABIZATION.....	82-97
---	-------

*Nikolay Gabrielyan*

THE PROBLEM OF EXPRESSING THE ADJECTIVE  
VIA MASDAR IN ARABIC.....

98-106

## **HISTORY AND LITIRATURE**

*Abu Zayd Ali Musa*

THE POSITION OF THE HAMAS MOVEMENT REGARDING  
THE PALESTINE LIBERATION ORGANIZATION AND  
THE OSLO ACCORDS.....

107-131

*Ani Davtyan*

RESPONSIBILITY TO PROTECT IN SYRIA: THE FAILURE  
OF INTERNATIONAL COMMUNITY TO STOP THE MASS  
ATROCITIES.....

132-139

*Artur Israyelyan, Zaruhi Hamazaspyan*

CRUSADER MONUMENTS IN TARTUS, LATAKIA, HOMS  
AND HAMA GOVERNORATES OF SYRIA.....

140-146

*Arsen Julfalakyan*

ADANA AGREEMENT AND TURKISH-SYRIAN  
RELATIONS BY 2002.....

147-169

*Gayane Mkrtyumyan*

ARMENIAN CHURCH IN THE MIDST OF  
THE ARMENIAN-ARAB RELATIONS.....

170-183

*Edita Asatryan*

THE EGYPTIAN-SAUDI CONFRONTATION AND  
THE CIVIL WAR IN NORTH YEMEN (1962-1970).....

184-199

*Khachik Azizyan*

THE REFORMS IMPLEMENTED BY MUHAMMAD ALI IN  
THE STATE MANAGEMENT SYSTEM OF EGYPT.....200-218

*Mariam Elmasyan*

ABDALLAH IBN AL-MUKAFFA'A AND HIS ROLE IN FORMATION  
OF THE NEW KNOWLEDGE AND ITS ADAPTATION.....219-235

ԱԴԱՆԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԹՈՒՐՔ-ՄԻՐԻԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՄԻՆՉԵՎ 2002 Թ.

*Արսեն Ջուլֆալյան  
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության  
ամբիոնի ասպիրանտ  
arsjulf@gmail.com*

*Բանալի բառեր. Թուրք-սիրիական հարաբերություններ, Միրիա,  
Ադանայի պայմանագիր, քրդական խնդիր, ՔԱԿ:*

Միջազգային հարաբերությունների համակարգում Մերձավոր Արևելքը պատմականորեն առանձնահատուկ դեր ու նշանակություն ունի: Այստեղ հարյուրամյակներ շարունակ քաղաքական խնդիրների լուծումն իր վրա է կրում տնտեսական, կրոնական, պատմական, արժեքային ու քաղաքակրթական գործոնների ազդեցությունը, որը տարածաշրջանային գործընթացները դարձնում է էլ ավելի բարդ ու խնդրահարույց: Նման բարդ ետնապատկերի ներքո ընդգծված առանձնանում են թուրք-սիրիական հարաբերությունները, որոնք, իրենց մեջ արտացոլելով տարածաշրջանային գործընթացների ժառանգությունը, այսօր էլ ծանր շրջափուլում են: Հայացք նետելով երկու երկրների փոխհարաբերություններին՝ նշենք, որ դրանց պատմական հիմքը տարածքային փոխադարձ հավակնությունների խնդիրն է, որը կապված է Ալեքսանդրետի սանջակի և մի շարք այլ տարածքների պատկանելության հետ: Հենց նշյալ հանգամանքից են ածանցվում երկու երկրների միջև առկա խնդիրների պատմական արմատները, որոնք դրսևորվում են կողմերի միջև ջրային հարցի ու քայքայիչ էթնիկ (հիմնականում

քրդական) խմբավորումների գործունեության շուրջ սկզբունքային հակադրությամբ՝ այդ կերպ տասնյակ տարիներ պայմանավորելով Սիրիայի ու Թուրքիայի փոխհարաբերություններում շարունակական լարվածությունը:

1980-ականների վերջին թուրք-սիրիական հարաբերությունները շարունակում էին մնալ բարդ ու խնդրահարույց: Չնայած երկրների միջև պատմականորեն ձևավորված «հողային պահանջատիրության» ու «ջրային բաշխման» հիմնահարցերին, երկկողմ հարաբերությունների բնույթն այս շրջանում առաջին հերթին ածանցվում էր այն իրողությունից, որ Թուրքիան մեղադրում էր Սիրիային տարածաշրջանում նրա շահերի սպասարկման գործընթացում (հատկապես ջրային ռեսուրսների բաշխման հարցում) հակաթուրքական գիծ ու ահաբեկչական գործելաոճ որդեգրած Քրդական աշխատավորական կուսակացությանը (ՔԱԿ) աջակցություն ու օժանդակություն ցուցաբերելու մեջ: Իհարկե սիրիական կողմը ավանդաբար հերքում էր նշյալ մեղադրանքը, սակայն թուրքական փաստարկները սովորաբար առավել ծանրակշիռ էին ու հիմնավոր: Այս հիմնահարցը սահմանակից երկու երկրների հարաբերությունները տարեցտարի դարձնում էր խնդրահարույց ու էլ ավելի լարված:

Նշենք, որ թուրք-սիրիական փոխհարաբերություններում շոշափելի փոփոխություններ չարձանագրվեցին նաև 90-ականների կեսերին: Ինչպես նախկինում, այնպես էլ այդ շրջանում քրդական խնդիրը շարունակում էր կայուն բացասական ազդեցություն ունենալ կողմերի հարաբերություններում: Այս փուլում ՔԱԿ-ի ռազմական միավորումները փորձում էին հաստատվել ու իրենց գործունեությունը ծավալել Թուրքիայի հատկապես հարավային նահանգներում (Ադանա, Մերսին, Հաթայ): Մասնավորապես՝ Հաթայում ՔԱԿ-ի ներկայության

մասին «Հուրիեթ»-ը 1995թ. սեպտեմբերի 17-ին գրում էր, որ Աբդուլա Օջալանը հայտարարել է Հաթայը Բոթանի<sup>1</sup> վերածելու իր մտադրության մասին: Ըստ թուրքական պարբերականի, ՔԱԿ-ը Սիրիայի աջակցությամբ նպատակ էր հետապնդում ապակայունացնել իրավիճակը թուրքական վերոհիշյալ շրջաններում և մասնավորապես Հաթայում, լարվածություն ստեղծել մի կողմից՝ այստեղ մեծամասնություն կազմող ալավիների, մյուս կողմից՝ թուրքական (թուրքմեն) բնակչության միջև<sup>2</sup>:

1995 թ.-ի վերջերին թուրք-սիրիական հարաբերությունների օրակարգում ՔԱԿ-ին Սիրիայի աջակցության հարցը նոր սրություն ստացավ: Դրան շոշափելիորեն նպաստած հիմնական պատճառներից էր նաև այն, որ Օջալանը Դամասկոսի միջնորդությամբ կապեր հաստատեց գերմանացի բարձրաստիճան քաղաքական և հետախուզական պաշտոնյաների հետ: Սեպտեմբերի 30-ին, ՔԱԿ-ի առաջնորդը Սիրիայում հանդիպեց Գերմանիայի կանցլեր Հելմութ Քոլի քաղաքական թիմակից Հեյնրիխ Լամերսին, ինչպես նաև գերմանական հետախուզության բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների<sup>3</sup>: Գերմանական կողմի այցի հայտարարված նպատակը Գերմանիայում ՔԱԿ-ի քաղաքական գործունեության շուրջ ձևավորված իրավիճակի քննարկումն էր: Նշվում էր, որ հանդիպման ժամանակ գերմանացիները Օջալանի ուշադրությունը հրավիրել են նաև այն փաստի վրա, որ ՔԱԿ-ը Գերմանիայում ներգրավված է թմրանյութերի անօրինական

---

<sup>1</sup> Բոթանը տարածք է Վանա լճի հարավում, որտեղ տասնամյակներ շարունակ արյունալի մարտեր են տեղի ունեցել ՔԱԿ-ի և թուրքական բանակի միջև:

<sup>2</sup> Olson R., The Kurdish Question and Turkey's Foreign Policy, 1991-1995: From the Gulf War to the Incursion Into Iraq// Journal of South Asian and Middle Eastern Studies, N 1, Volume 19, Fall 1995, pp. 105-107:

<sup>3</sup> Hürriyet, 22-26 Nov. 1995:

ըջանառության մեջ: Ի պատասխան գերմանացիների դիտարկումներին, Օջալանը հայտարարել էր, որ այդ հարցերը լուծման ենթակա են, եթե Գերմանիան ճանաչի ՔԱԿ-ին՝ որպես լեգիտիմ միավոր և դադարեցնի այն որակելի ահաբեկչական կազմակերպություն<sup>4</sup>:

Նման իրավիճակում, երբ առկա էր լրջագույն խնդիր քրդական խմբավորումների, նրանց աջակցող, Թուրքիայում բնակվող քրդական ազգաբնակչության և ոչ բարիդրացիական սահմանակից հարևանների հետ, Թուրքիայի կողմից Իսրայելի հետ նախաձեռնած համագործակցությունը խնդիրների լուծում գտնելու բավական խելամիտ ու հաշվարկված մոտեցում էր: Արդեն 1990-ականների կեսերին մեկնարկած և 1996 թ. ակտիվացած համագործակցությունը Թուրքիայի և Իսրայելի միջև ռազմատեխնիկական ու տնտեսական ոլորտներում<sup>5</sup> նշանակալի քայլ էր ոչ միայն երկու երկրների համար առհասարակ, այլև որոշակի կարևորություն ուներ Թուրքիայի համար քրդերի դեմ պայքարի համատեքստում՝ հաշվի առնելով Լիբանանի հարավում Հիզբալլահի մարտիկների դեմ իսրայելական բանակի արդյունավետ գործողությունների իրականացման փորձառությունը: 1996 թ. Թուրքիայի ու Իսրայելի միջև կնքված համաձայնագրով Իսրայելը հանձն էր առնում օգնել Թուրքիային ամրացնել իր սահմանները՝ քուրդ անջատողականներից պաշտպանվելու նպատակով<sup>6</sup>: Հատկանշանակ է, որ թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցության հաստատումից որոշ ժամանակ անց Սիրիայի հյուսիսում

<sup>4</sup> Olson R., The Kurdish National Movement in the 1990s, The University Press of Kentucky, 1996, p. 91:

<sup>5</sup> Nachmani A., Turkey: facing a new millenium: coping with intertwined conflicts, Manchester University Press, 2003, pp. 222-224

<sup>6</sup> Конович Ф.Е, Турецко-Израильские отношения в 90-е годы (военно-политический аспект), сб. статей «Востоковедный сборник», вып. 4, Москва, 2003, стр. 68

դիվերսիոն մի շարք գործողություններ տեղի ունեցան, մասնավորապես՝ պայթյուններ եղան Սիրիայում գտնվող ՔԱԿ-ի որոշ գրասենյակներում: Հիշյալ գործողությունների համար սիրիական իշխանությունները մեղադրեցին թուրքական հատուկ ծառայություններին, որի արդյունքում երկու երկրների միջև հարաբերություններում լարվածությունն էլ ավելի մեծացավ<sup>7</sup>:

1997 թ. մարտի 31-ին, ելույթ ունենալով Թուրքիայի Ազգային Անվտանգության Խորհրդի նիստում, Հաթայի նահանգապետ Ուսուկու Աջունը հայտարարեց, որ Սիրիան է կանգնած Հաթայում ՔԱԿ-ի գործողությունների ետևում՝ զուգահեռ նշելով, որ Սիրիան խրախուսում է արաբների կողմից նահանգային հողատարածքների գնումը: Ըստ Աջունի, ՔԱԿ-ի նպատակն էր ակտիվություն ցուցաբերել Հաթայում՝ ընդլայնելով սեփական գործողությունների աշխարհագրությունը մինչև Տավրոս՝ սեփական հենակետերը միջերկրածովյան շրջանում հիմնելու հեռանկարով<sup>8</sup>: Փաստ է, որ Հաթայում ՔԱԿ-ի ակտիվությունը շատ էր անհանգստացնում թուրքական իշխանություններին: Դրանով էին պայմանավորված նաև երկրի վարչապետի պաշտոնում ընտրված Մեսութ Յլմազի պարբերական այցելությունները Թուրքիայի այդ շրջան: 1997 թ. հուլիսի վերջին, գտնվելով Հաթայում, Յլմազն ուղղակիորեն մեղադրեց Սիրիային ԱՄԱԼԱ-ին և ՔԱԿ-ին աջակցելու մեջ: Ըստ նրա. «Նրանք, ովքեր փորձում են թշնամանք սերմանել երկար տարիների ընթացքում կողք կողքի ապրած մեր ազգերի (թուրքերի և քրդերի) միջև, կհայտնվեն իրենց իսկ փորած փոսում: Մենք գիտենք, թե ովքեր են խաթարում Թուրքիայի զարգացումը և աջակցում դավաճան կազմակերպություններին: Նրանք (սիրիացիները – Ա.Զ.) ամեն ինչ

---

<sup>7</sup> Gersh A, Turkish-Israeli-Syrian Relations and Their Impact on the Middle East, Middle East Journal, Vol. 52, No. 2 (Spring, 1998), p.193

<sup>8</sup> Hürriyet, 01.07.1997



անում են Հարավ-արևելյան Անատոլիայի նախագծին խոչընդոտելու, այդ նախագծի իրականացման աշխատանքները դադարեցնելու համար»<sup>9</sup>:

1997թ. վերջին Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած այցի ժամանակ Թուրքիայի նախագահ Սուլեյման Ղեմիլբեյը թուրք-սիրիական հարաբերությունների վերաբերյալ մի շարք խիստ հայտարարություններով հանդես եկավ: Ըստ Ղեմիլբեյի՝ երկու երկրների միջև գոյություն ունեցող հարաբերություններում առկա հիմնական խնդիրը ջրային հիմնահարցն է, մինչդեռ Սիրիան այդ խնդրի լուծման նպատակով միջոցներ ձեռք առնելու փոխարեն փորձում է տարածաշրջանում ակտիվացնել հակաթուրքական տրամադրությունները <sup>10</sup> : Սա հստակ հաղորդագրություն էր առ այն, որ Անկարայում շատ լավ գիտակցում են, որ Սիրիան «քրդական» գործոնը կիրառում է որպես գործիք՝ ջրային խնդրում Թուրքիայի մոտեցման վրա ճնշում գործադրելու համար, որը թուրքական կողմի համար որևէ կերպ ընդունելի չէ:

Թուրք-սիրիական ընդգծված սուր հարաբերություններում որոշակի խիստ կարճաժամկետ մեղմացում նկատվեց 1998թ. փետրվարի սկզբին, երբ Թուրքիայի ԱԳՆ նախարար Իսմաիլ Ջեմն այցելեց Իրաք, որտեղ քննարկված համագործակցության ծրագրերի շարքում նրա կողմից առաջարկություն եղավ Թուրքիայի և Իրաքի գլխավորությամբ ստեղծել անվտանգության և համագործակցության տարածաշրջանային պակտ, որին կանդամակցեն նաև Իրանը, Սիրիան ու Հորդանանը <sup>11</sup> : Նույն

<sup>9</sup> Hürriyet, 24.07.1997

<sup>10</sup> Иванова И.И., Турецко-Арабские отношения на современном этапе. сб. Статей “Международные отношения на Ближнем и Среднем Востоке и политика России на рубеже 21-го века”, М., 2000, стр. 206

<sup>11</sup> Նշվ. աշխ., էջ 207

ամսին Թուրքիայի ԱԳՆ Մերձավոր Արևելքի վարչության պետ Ա. Չեթիրգեն այցելեց Դամասկոս: Այցի օրակարգը 1995 թ. սրացման արդյունքում թուրք-սիրիական խաթարված հարաբերությունների բարելավումն էր: Նույն թվականի հունիսի սկզբին Սիրիայի արտգործնախարարի՝ քաղաքական հարցերով տեղակալ Ա. Օմրանը պատասխան այցով Անկարայում էր՝ փորձելով տրամաբանական շարունակություն տալ թուրքական նախաձեռնությանը, սակայն այդ բանակցությունները որևէ նշանակալի արդյունք չտվեցին:

Կարծում ենք՝ տրամաբանական է, որ այս ընթացքում թուրք ու սիրիացի պաշտոնյաների բազմաթիվ ու բազմազան փոխայցելությունները ՔԱԿ-ի խնդրի լուծման հարցում որևէ շոշափելի առաջընթաց չարձանագրեցին: Դրա համար կային առավել քան բավարար պատճառներ. մասնավորապես՝ սիրիական կողմը սովորաբար խուսանավում էր քրդական հիմնահարցի վերաբերյալ հստակ դիրքորոշում ներկայացնելուց, ինչպես նաև միշտ չէր, որ պահպանում էր բանակցություններում ձեռք բերված պայմանավորվածությունները: Ավելին, 1990-ականների կեսերից սիրիական կողմն արդեն հրապարակային հնարավորություններ էր ընձեռում ՔԱԿ-ին՝ հանդիպելու Սիրիայում ներկայացված եվրոպական երկրների դիվանագիտական ներկայացուցիչների հետ: Փաստորեն այս կերպ Դամասկոսը փորձում էր նոր որակ ու ճանաչելիություն հաղորդել ՔԱԿ-ին եվրոպական քաղաքական-դիվանագիտական շրջանակների մոտ:

Հասկանալի է, որ սիրիական կողմի նման վարքի հետևանքով Թուրքիայի մոտեցումները պետք է որակապես կոշտանային, և որպես այս ամենի կանխատեսելի հետևանք՝ 1998 թ. երկրորդ կեսին իրավիճակը թուրք-սիրիական հարաբերություններում

կտրուկ սրվեց: Անկարան հաստատակամ էր ամեն գնով լուծել քրդական խնդիրը: Դրա մասին էր վկայում, նաև այն, որ այս շրջանում թուրքական պետական էլիտայի ամենատարբեր ներկայացուցիչներ հանդես եկան Սիրիային ուղղված խիստ նախազգուշացումներով ու քննադատությամբ <sup>12</sup> : Օրինակ՝ Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենտ Էջլիթը հայտարարեց, որ Անկարան պատրաստ է դիվանագիտական, քաղաքական, տնտեսական և, եթե հարկ լինի, նաև ռազմական միջոցներ ձեռք առնել Սիրիայի վրա հարձակման նպատակով, քանի որ այդ երկիրը շարունակում է աջակցել ՔԱԿ-ին: Քաղաքական հռետորաբանությունից զատ, Անկարան անցավ կոնկրետ քայլերի: Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդում Սիրիայի հետ սահմանի վրա թուրքական ռազմական ուժերի ավելացման մասին որոշում ընդունվեց. հրահանգներ տրվեցին անվտանգության համապատասխան մարմիններին՝ թուրքական զինուժի հնարավոր անվտանգ առաջխաղացումն ապահովելու նպատակով երկու երկրների սահմանային գոտու ականապատված բոլոր տարածքները հայտնաբերելու վերաբերյալ <sup>13</sup> : Սիրիայից պահանջելով դադարեցնել քրդերին տրամադրվող աջակցությունը՝ թուրքական իշխանությունները հոկտեմբերին սիրիական սահմանին կենտրոնացրին զգալի քանակի ռազմական ուժ ու տեխնիկա:

Փաստորեն տարածաշրջանը կանգնած էր լայնամասշտաբ պատերազմի վտանգի առաջ: Այս առումով կարևոր է անդրադառնալ նաև ձևավորված իրավիճակի նկատմամբ տարածաշրջանային առանցքային երկրների մոտեցումներին:

<sup>12</sup> Özden Z. O., Water Dispute and Kurdish Separatism in Turkish-Syrian Relations, The Turkish Yearbook, vol 34, 2003, pp. 105-106

<sup>13</sup> Շաքարյան Ա., Թուրք-սիրիական հարաբերություններ, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEM\\_ENT\\_ID=885](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEM_ENT_ID=885), 06.10.2005:

Միրիային ուղղված թուրքական վերջնագրերի համատեքստում Եգիպտոսի նախագահ Ն. Մուբարաքը և Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդը հանդես եկան Անկարայի և Դամասկոսի միջև միջնորդական առաքելության նախաձեռնությամբ: Արաբական մի շարք երկրների ղեկավարներ կոչ արեցին կողմերին (հատկապես Թուրքիային) կարգավորել հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով: Ի պատասխան թուրքական ռազմական հռետորաբանությանը, Միրիայի ԱԳ նախարար Ֆարուք ալ-Շարանը հայտարարեց, որ Դամասկոսը ցանկանում է հարցը կարգավորել երկխոսության, ոչ թե ռազմական ճանապարհով: Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրին իր հերթին դատապարտեց թուրքական ռազմական սպառնալիքները՝ դրանք համարելով թուրք-իսրայելական դաշինքի պտուղներ: Թուրքական վերջնագրերը քննադատական գնահատականների արժանացան հատկապես Իրանում: Իրաքը նույնպես դատապարտեց թուրքական գորքերի առաջխաղացումը, որով վտանգվում էր նաև իրաքյան սահմանային շրջանների կայունությունը: Լիբիայի նախագահ Մուհամադ Քադաֆին սպառնաց, որ եթե Թուրքիան հարձակվի Միրիայի վրա, ապա իրենք կփակեն Լիբիայում գործող թուրքական ընկերությունները՝ փոխարինելով դրանք հունականով: Քուվեյթի էմիրը կոչ արեց Դեմիրելին և Ասադին՝ առկա խնդիրները լուծել բացառապես երկխոսության միջոցով: Սակայն այս ողջ ընթացքում թուրքական կողմը շարունակում էր ուժեղացնել Միրիային ուղղված ռազմական սպառնալիքները՝ միաժամանակ նշելով, որ «ամեն ինչ կախված է Դամասկոսից»<sup>14</sup>:

---

<sup>14</sup> Uğur Kaya, Dilek Yankaya, "Les relations de la Turquie avec la Syrie", Istanbul, 2013, p. 85

Հոկտեմբերին Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի և Իրանի արտգործնախարար Քեմալ Հարազիի ջանքերի և մաքոքային դիվանագիտության շնորհիվ կանխվեց թուրք-սիրիական ռազմական բախումը: Գործնականում թուրքական կողմի ռազմական ուժի կիրառման սպառնալիքի պայմաններում Սիրիան ստիպված էր գնալ զիջումների: 1998 թ. հոկտեմբերի 21-ին Ջեյհան քաղաքում (Ադանայի նահանգ) ստորագրվեց պայմանագիրը, որի կողմերը (բանակցությունները վարում էին թուրք գեներալ Աթիլլա Աթեշը և սիրիացի գեներալ Ադան Բադր Ալ-Հասանը)<sup>15</sup> պարտավորվում էին<sup>16</sup>.

1. փաստաթղթի ստորագրման պահից Օջալանը չպետք է գտնվեր Սիրիայում և այլևս երբեք այդ երկիր մուտքի թույլտվություն չստանար,

2. արտերկրում գտնվող ՔԱԿ-ի անդամները Սիրիա մուտքի թույլտվություն ևս չպետք է ստանային,

3. արձանագրությունների ստորագրման պահից ՔԱԿ-ի ճամբարների գործունեությունը պետք է կասեցվեր և այլևս երբեք չվերսկսվեր,

4. ՔԱԿ-ի մի շարք անդամներ պետք է ձերբակալվեին և կանգնեին դատարանի առաջ. նրանց ցուցակներն առկա էին:

Ենթարկվելով համակողմանի ճնշումների և ելնելով հնարավոր ռազմական բախման վտանգից՝ սիրիական կողմը հաստատեց վերոնշյալ կետերն իրականացնելու պատրաստակամությունը: Ավելին՝ կողմերը համաձայնության

<sup>15</sup> Ахмедов В.М., Сирия при Башаре Асаде. Региональный опыт модернизации в условиях внешней нестабильности. М., 2005, стр. 144

<sup>16</sup> Ахмедов. В.М., Сирийско-турецкое противостояние и курдский вопрос, сб. статей “Ближний Восток и современность”, вып. 7, М., 1999, стр. 20

եկան նաև մի շարք այլ հարցերի շուրջ<sup>17</sup>: Միրիան պարտավորվում էր.

- արգելել իր տարածքից Թուրքիայի կայունության ու անվտանգության դեմ ծավալվող ցանկացած գործունեություն,

- ընդունել ՔԱԿ-ը որպես ահաբեկչական կազմակերպություն, և ահաբեկչական այլ կազմակերպությունների նման, իր տարածքում արգելել նրա և նրան հարող կազմակերպությունների գործունեությունը,

- կասեցնել զինամթերքի, գույքի մատակարարումները, ֆինանսական օժանդակությունը և իր տարածքում ՔԱԿ-ի քարոզչական գործունեությունը,

- արգելել ՔԱԿ-ի ճամբարների տեղակայումը, ապաստան չհատկացնել և պայմաններ չստեղծել զորավարությունների անցկացման համար, ինչպես նաև սեփական տարածքում արգելել ՔԱԿ-ի առևտրային գործունեությունը,

- արգելել ՔԱԿ-ի անդամներին օգտագործել իր տարածքը երրորդ երկրներ տեղափոխվելու համար,

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ՔԱԿ-ի ղեկավարի մուտքը Միրիա բացառելու համար, այդ թվում՝ նախազգուշացնել իր համապատասխան սահմանապահ մարմիններին:

Երկու կողմերը վերոնշյալ դրույթների իրականացման համար համաձայնեցին սահմանել տեխնիկական ու գործընթացային որոշակի մեխանիզմներ, որոնք իրենց մեջ ներառում էին.

- երկու երկրների անվտանգության ծառայությունների միջև անմիջական և ուղիղ հեռախոսակապի ներդրում,

---

<sup>17</sup> Statement Made By İsmail Cem, Foreign Minister, On The Special Security Meeting Held Between Turkey And Syria October 20, 1998 (Unofficial Translation), [http://www.mfa.gov.tr/\\_p\\_statement-made-by-ismail-cem\\_-foreign-minister\\_-on-the-special-security-meeting-held-between-turkey-and-syria\\_br\\_october-20\\_-1998\\_br\\_unofficial-tr-anstlation\\_\\_\\_p\\_.en.mfa](http://www.mfa.gov.tr/_p_statement-made-by-ismail-cem_-foreign-minister_-on-the-special-security-meeting-held-between-turkey-and-syria_br_october-20_-1998_br_unofficial-tr-anstlation___p_.en.mfa)

▪ թուրքական կողմի առաջարկով ահաբեկչության դեմ պայքարի գործողությունների ներքո համակարգի ստեղծում որը կապահովեր անվտանգության միջոցառումների արդյունավետությունը,

▪ ստանալով Լիբանանի համաձայնությունը՝ կողմերը պայմանավորվեցին ՔԱԿ-ի դեմ պայքարի եռակողմ ձևաչափի ստեղծել,

▪ սիրիական կողմն իր վրա էր վերցնում այս արձանագրության կետերը կյանքի կոչելու և արդյունքների հասնելու պատասխանատվությունը:

Ըստ շրջանառվող լուրերի, բացի վերոնշյալ կետերից բաղկացած պայմանագրի արձանագրություններից՝ կողմերի միջև կնքվել են մի շարք այլ արձանագրություններ ևս, որոնք, սակայն, չեն հրապարակվել<sup>18</sup>: Փաստորեն Ադանայի պայմանագրի կողմերը համաձայնության եկան ՔԱԿ-ի դեմ պայքարում ներառել նաև Լիբանանին: Ենթադրվում էր, որ թուրք-սիրիական համատեղ հանձնաժողովը պարբերաբար պետք է ստուգումներ անցկացներ երկու երկրների սահմանային շրջաններում՝ ՔԱԿ-ի գրոհայինների հնարավոր ակտիվացման օջախները վերհանելու նպատակով: Ադանայի համաձայնագրի կնքումից հետո Աբդուլա Օջալանը վտարվեց Սիրիայի կողմից վերահսկելի տարածքներից, իսկ ավելի ուշ՝ 1999 թ. փետրվարին, նա ձերբակալվեց Քենիայում, ինչից հետո նրա գլխավորած կազմակերպությունը նախ հայտարարեց հրադադարի, իսկ 2002թ. փետրվարին՝ ինքնալուծարման մասին<sup>19</sup>: ՔԱԿ-ը, իհարկե, չանհետացավ քաղաքական ասպարեզից, այլ սկսեց գործել ՔԱԴԵԿ անվան տակ (քրդերեն

<sup>18</sup> Olson R., Turkey's Relations with Iran, Syria, Israel, and Russia, 1991-2000: The Kurdish and Islamist Questions, in Turkish Studies Association Bulletin. p. 114

<sup>19</sup> Soner Cagaptay. Can the PKK Renounce Violence? Terrorism Resurgent// Middle East Quarterly, Winter 2007, p. 75

հապավում՝ «Kongreya Azadi u Demokrasiya Kurdistan»<sup>20</sup> անվանումից - Քրդստանի Ազատության և Ժողովրդավարության Կոնգրես):

1998 թ.-ի ճգնաժամը Թուրքիայի ու Սիրիայի հարաբերություններում ի դերն հանեց թուրքական դիվանագիտության ավելի վստահ ու ազդեցիկ լինելու հանգամանքը, ինչին, իհարկե, էականորեն նպաստեցին Իսրայելի հետ Թուրքիայի համագործակցելու փաստը, ինչպես նաև Սիրիայի նկատմամբ ԱՄՆ-ի ճնշումները, ՔԱԿ-ին հովանավորելու հարցում արաբական ոչ բոլոր երկրների աջակցությունը Դամասկոսին: Փաստացիորեն Թուրքիայի գործողությունները դարձան ավելի վաղ ստորագրված թուրք-իսրայելական դաշինքի առաջին պտուղները: Հաֆեզ ալ-Ասադը, գիտակցելով երկու ճակատներով պայքարելու անհնարինությունը (մեծ էր հավանականությունը, որ Իսրայելն անպայմանորեն կբացի երկրորդ ճակատը հարավից), զիջման գնաց Թուրքիային՝ կատարելով վերջինիս բոլոր պահանջները: Գործնականում Սիրիան հայտնվել էր իր համար բացառիկ ոչ շահեկան իրավիճակում, ուստի զիջումները Թուրքիայի հետ հարաբերություններում, հեռանկարում նրա հետ մրցակցելու համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը Դամասկոսին ստիպեցին փոխել մոտեցումները՝ այդ կերպ հնարավորություն ստանալով իր հարևանների հետ ներգրավվել առավել կառուցողական երկխոսության մեջ:

1998 թ. Ադանայի համաձայնագրի ստորագրումից հետո արդեն հաջորդ տարի թուրք-սիրիական երկկողմ հարաբերություններում որոշակի առաջընթաց արձանագրվեց, քանի որ շոշափելիորեն ակտիվացան տնտեսական շփումները: Որպեսզի հստակ լինի, թե ինչ գործակցություն տեղի ունեցավ ու

<sup>20</sup> Որոշ աղբյուրներում կարելի է հանդիպել ՔԱԿ-ՔԱԴԵԿ անվանումը



ինչ ծավալներ այն ընդգրկեց, նշենք, որ 1999-ին թուրք-սիրիական ապրանքաշրջանառությունը կազմեց 539.2 մլն դոլար, իսկ արդեն 2000-ին այն հասավ 724,7-ի: Այս ցուցանիշով Թուրքիան դարձավ Սիրիայի համար արտաքին ամենամեծ տնտեսական գործընկերների շարքում չորրորդ երկիրը: Նման կարճ ժամկետում դա լուրջ ձեռքբերում էր: Այս առումով կարևոր դերակատարում ունեցավ նաև այն, որ այս ժամանակահատվածում ինչպես Սիրիայում, այնպես էլ Թուրքիայում տեղի ունեցան իշխանափոփոխություններ. Սիրիայում Հաֆեզ ալ-Ասադի մահվանից հետո (2000 թ. հունիսի 10) երկրի ղեկավար դարձավ նրա որդի Բաշար ալ-Ասադը: Թուրքիայում երկրի նոր նախագահ դարձավ Ահմեդ Սեզերը, որի առաջին արտերկրյա այցը եղավ Սիրիա՝ մասնակցելու Հաֆեզ ալ-Ասադի հուղարկավորությանը: Այդ քայլը բարձր գնահատականի արժանացավ Սիրիայում, ուր կարևորեցին Ասադի հուղարկավորությանը նման բարձրաստիճան մակարդակով Թուրքիայի ներկայացվածությունը<sup>21</sup>:

Փաստորեն Ադանայի պայմանագիրը երկու երկրների համար կարևոր դերակատարում ունեցավ ոչ միայն քրդական խնդրի հնարավորությունների ուրվագծման տեսանկյունից, այլև հնարավորություն տվեց Թուրքիային ու Սիրիային շոշափելիորեն ակտիվացնել շփումներն ու գործակցությունը տնտեսական ոլորտում:

1999 թ.-ին Սիրիայի վարչապետ Սալիմ Յասինի գլխավորած պատվիրակության՝ Թուրքիա կատարած այցից հետո երկու երկրները որոշեցին ակտիվացնել (վերագործարկել) Համատեղ տնտեսական հանձնաժողովի գործունեությունը, որը սառեցվել էր դեռ 1988-ին: 2000 թ.-ին Դամասկոսում փոխհամաձայնության

<sup>21</sup> Jerusalem Post - 29.10.2000

համաձայնագրի ստորագումից հետո համագործակցության նոր հորիզոններ բացվեցին երկու երկրների միջև: Ըստ համաձայնագրի, Հանձնաժողովի գործառույթների մեջ էին մտնելու.

- թուրք և սիրիացի գործարարների համար հատուկ խորհրդի ստեղծումը, որը նաև պետք է տնտեսական ակտիվության ավելացման, կարծիքների փոխանակման կարևոր հարթակ դառնար,

- երկու երկրների գործարար շրջանակների միջև հարաբերությունների և շփումների ակտիվացումը,

- կրկնակի հարկումից խուսափելու և ներդրումների պաշտպանվածության ապահովման համաձայնագրի ստորագրումը<sup>22</sup>:

Յասինի այցի ընթացքում թուրքական մոտ հարյուր կազմակերպություններ տարբեր պայմանագրեր ստորագրեցին իրենց սիրիացի գործընկերների հետ, որի ընդհանուր փաթեթը կազմեց 400 մլն դոլար <sup>23</sup>: Նախատեսված էր, որ հանձնաժողովի աշխատանքերը պետք է մեկնարկելին 2001 թ.-ի սկզբին: Հետագա իրողությունները ցույց տվեցին, որ վերականգնվող հարաբերություններում տնտեսական բաղադրիչի զարգացման առումով նշյալ կառույցը կարևոր դեր է ունենալու: Օրինակ՝ հանձնաժողովի հունիս ամսվա նստաշրջանի ժամանակ քննարկման օրակարգի գլխավոր հարցը Միրիայի տարածքով տարածաշրջանի այլ երկրներ թուրքական ապրանքների տեղափոխումն էր: Գործնականում Միրիան հնարավորություն էր ստանում Թուրքիայի համար դառնալ Արաբական աշխարհի հետ տնտեսապես կապվելու կարևորագույն օղակ <sup>24</sup>: Մյուս կողմից՝

<sup>22</sup> «KEK protokolune imza», NTV, 10.05.2000

<sup>23</sup> «Suriye Beyaz Sayfa Acti» Dunya (Ihracat Dunyasi), 26. 05. 2000

<sup>24</sup> Arabic News.com 22.06.2001

Սիրիան իր առջև խնդիր էր դրել դառնալ արաբական աշխարհի - Թուրքիա շփումներում անփոխարինելի միջնորդի դերակատար, և որպես նշյալի վառ դրսևորում, 2001թ. Սիրիան պայմանագիր կնքեց Եգիպտոսի ու Հորդանանի հետ, որի համաձայն Դամասկոսն իր էներգետիկ ենթակառուցվածքների միջոցով (250-300 կմ ձգվածությամբ գազատար) մինչև 225 մլն մ<sup>3</sup> գազ էր տեղափոխելու Թուրքիա<sup>25</sup>: Այս հանգամանքը էապես մեծացնում էր Սիրիայի դերակատարությունը ինչպես տարածաշրջանում ընդհանապես, այնպես էլ ռեսուրսների կարիք ունեցող Թուրքիայում մասնավորապես:

Ադանայի պայմանագրից հետո սիրիա-թուրքական հարբերություններում, բացի տնտեսական աճ արձանագրող բաղադրիչից, օրակարգային դարձան նաև մի շարք այլ առանցքային հիմնահարցեր, մասնավորապես՝ ջրի ու տարածքային խնդիրները, անվտանգության հարցերը:

1998 թ. հետո արձանագրված տեսանելի առաջընթացի առաջին պտուղը ջրի խնդրի վերաբերյալ թուրքական մոտեցման մեջ ի հայտ եկած որոշակի փոփոխություններն էին: 2000 թ. մարտին երկու երկրների փոխարտգործնարարները փորձեցին համաձայնության գալ քրդական և ջրային խնդիրների հարցում: Թեև այդ բանակցությունները ջրային հարցի մասով որոշակի արդյունք չտվեցին, սակայն կողմերի մոտ կար հստակ տեսանելի ցանկություն հարցին լուծում տալու առումով: Հանդիպումը կարևոր էր նաև այն առումով, որ նրա ընթացքում կնքված «Հիմնական սկզբունքների մասին հռչակագիրը» փաստորեն դարձավ երկու երկրների կողմից տարածքային ամբողջականության ճանաչման հիմնական փաստաթուղթը: Այս հանդիպման արդյունքների վերաբերյալ իր գնահատականներում

<sup>25</sup> "Turkey-Syria Trade Relations," report prepared by the Embassy of Damascus of the Turkish Republic, (December 1996), pp.14

Թուրքիայի արտգործնախարար Իսմաիլ Ջեմը նշեց, որ. «Թեև Սիրիան ներկայումս խնդիրներ չունի՝ կապված ջրային ռեսուրսների հետ, սակայն այդ հարցում սիրիական կողմի մոտ նման հեռանկարի մասով կասկածներ, այնուամենայնիվ, դեռևս առկա են»<sup>26</sup> : Այս համատեքստում, եթե հիմք ընդունենք, որ ժամանակ առ ժամանակ Եփրատից կատարվող մատակարարումների ծավալն էր Թուրքիայի և Սիրիայի միջև հարաբերությունների առկա մակարդակի լավագույն բնորոշումը, ապա պետք է նշել, որ երկու երկրների միջև հարաբերությունների բարելավման վկայությունը դարձավ մատակարարումների ծավալի ավելացումը 500 մ3/վ-ից մինչև 700 մ3/վ<sup>27</sup> : Սիրիական կողմն իր հերթին բարձր գնահատեց երկու երկրների հարաբերությունների ջերմացմանն ուղղված Թուրքիայի քայլերը :

2000 թ. նոյեմբերին Սիրիայի փոխնախագահ Աբդ Ալ-Հալիմ Հադդամը պաշտոնական այցով ժամանեց Անկարա: Այցի ընթացքում ստեղծվեց համատեղ հանձնաժողով, որը պետք է համաձայնեցներ կողմերի դիրքորոշումներն առկա խնդրահարույց հարցերի (ջրային և տարածքային խնդիրներ) շուրջ: Նույն ամսին Սիրիայի և Թուրքիայի նախագահները հանդիպեցին Դոհայում կայացած մուսուլմանական պետությունների ղեկավարների գագաթաժողովին, ուր քննարկվում էին տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերը: Ավելի ուշ՝ արդեն 2001 թ. հունիսին, սիրիական ռազմական պատվիրակությունը գեներալ Ահմադ Ալ-Ալիի ղեկավարությամբ այցելեց Թուրքիա: Անցկացված բանակցությունների օրակարգում երկու երկրների ռազմական, տեխնիկական և գիտական համագործակցությանն առնչվող

<sup>26</sup> Аш-Шурук -26.03.2000, (Հղումն ըստ Арутюнян А.Э.. Турецко-сирийские отношения на рубеже веков (1980-е годы - начало XXI века): Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, М 2007, стр. 137

<sup>27</sup> Milliyet – 04.01.2000

հարցերն էին: Չնայած պարզ էր, որ ռազմական ոլորտում համագործակցություն ունենալու համար կողմերը պետք է դեռ երկար ճանապարհ անցնեին, հիմնավոր վստահության մթնոլորտ ստեղծվեր ու, ամենակարևորը, ձևավորվեին ընդհանուր շահեր<sup>28</sup>, սակայն հենց միայն այն փաստը, որ ոչ հեռու անցյալի հակառակորդներն արդեն ռազմական ոլորտում գործակցության հնարավորություններ են փնտրում միջպետական հարաբերությունների որակական փոփոխության լավագույն վկայությունն էր<sup>29</sup>:

Նույն՝ 2001 թ. Թուրքիայի և Սիրիայի ներքին գործերի նախարարությունների միջև համաձայնագիր ստորագրվեց քրեական հանցագործությունների, կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ համատեղ պայքարի վերաբերյալ<sup>30</sup>:

Ջուզահեռաբար կողմերը սկսեցին քայլեր ձեռնարկել դեռ Ալեքսանդրետի սանջակի՝ Թուրքիայի կազմում ներառվելուց ի հայտ եկած տարածքային խնդիրների լուծման ուղղությամբ:

---

<sup>28</sup> Այդուհանդերձ, թուրքական պատվիրակության ղեկավար Ռեշաթ Թուրութը հանդիպման ժամանակ հայտարարեց, որ դեռևս վաղ է խոսել թուրք-սիրիական համատեղ զորավարությունների մասին. դրանք հնարավոր են միայն ժամանակի ընթացքում երկու երկրների միջև քաղաքական հարաբերությունների աստիճանական ջերմացման պարագայում: (St`u Turkish Daily News-08.06.2001)

<sup>29</sup> Կողմերի անվտանգության ոլորտում երկկողմ հարաբերությունների զարգացման տեսանկյունից պետք է մատնանշել Սիրիայի սպայական կորպուսի հրամանատար Հասան Թուրքմանիի և նրա թուրք գործընկեր Հուսեյն Օղլիի հանդիպումն Անկարայում (2002թ. հունիսի 19-ին): Հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք հիմնահարցեր, այդ թվում՝ պայքարն ահաբեկչության դեմ, երկու երկրների սահմանային ողջ գոտու ականեզերծումը, համատեղ զինավարժությունների հնարավոր իրականացումը: Այցի ընթացքում կնքվեցին «Ռազմական ոլորտում կրթական, տեխնիկական և գիտական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը» և «Ռազմական կրթության ոլորտում համագործակցության մասին համաձայնագիրը» (St`u Ахмедов В.М. Сирий при Башаре Асаде էջ 138-139):

<sup>30</sup> ArabicNews.com-11.09.2001

Ալեքսանդրետի՝ Թուրքիայի կազմ մտնելուց հետո սանջակի բնակչությունը մասնատվել էր և միմյանց ազգական տարբեր ընտանքիներ հայտնվել էին սահմանի տարբեր կողմերում: Քայլեր էին ձեռնարկվում նաև այդ խնդրի կարգավորման ուղղությամբ: Այդ համատեքստում կարևոր իրադարձություններից էր մահմեդական Ամանորի ժամանակահատվածում Բայլադագ - Քեսաբ սահմանային կետում թուրք-սիրիական սահմանի բացումը՝ երկար տարիներ միմյանցից բաժանված ազգականներին այդ տոնը միասին տոնելու հնարավորություն ընձեռելու նպատակով<sup>31</sup>:

Երկու երկրների փոխհարաբերությունները նոր փուլ թևակոխեցին 2002 թ.-ին Թուրքիայում Ռեջեփ Թայիթ Էրդոդանի գլխավորած Արդարություն և Զարգացում Կուսակցության(ԱԶԿ) իշխանության գալով: Թեև ԱԶԿ-ի արտաքին քաղաքական օրակարգում առանցքային էին համարվում իրավիճակն Իրաքում, ԵՄ անդամակցության և կիպրոսյան հիմնախնդիրների ապագան<sup>32</sup>, այդուհանդերձ, ԱԶԿ-ի արտաքին քաղաքականությունն ուղղված էր նաև Մերձավոր Արևելքի երկրների հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելուն: ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո պարզ դարձավ, որ այդ կուսակցությունը փորձում է որոշակիորեն սառեցնել շփումները Իսրայելի հետ՝ արաբական երկրների հետ ավելի անկեղծ երկխոսություն ապահովելու նպատակով: Ինչպես և Նեջմեթին Էրբաքանի գլխավորած Ռեֆահ կուսակցության իշխանության գալու պարագայում, այս անգամ ևս որոշ թերթեր գրում էին, որ ԱԶԿ-ն իր արտաքին

---

<sup>31</sup> ArabicNews.com-16.02.2002

<sup>32</sup> ԱԶԿ-ի քաղաքականության մասին առավել մանրամասն տե՛ս Боре́йко А.Н. Основы внешней политики Турции: история и современность// сб. статей “Востоковедный сборник”, вып.6., 2004, էջ 134:

քաղաքականության մեջ հնարավոր է է՛լ ավելի ակտիվացնի համագործակցությանն իր հարավային հարևան Սիրիայի հետ<sup>33</sup>:

Եվ իրոք, հետագա քաղաքական զարգացումները փաստեցին, որ Էրդոդանի կառավարման առաջին շրջանում թուրք-սիրիական հարաբերությունները շոշափելի առաջընթաց գրանցեցին: Սա իր հիմքում ուներ բազմաթիվ դրդապատճառներ և ամենից առաջինը Թուրքիայի՝ իր հարևանների հետ որդեգրած նոր քաղաքականությունն էր: Քաղաքականություն, որի ակունքներում կանգնած էր դոկտոր Ահմեդ Դավութօղլուն, ում հայեցակարգի հիմնանպատակը Թուրքիայի՝ տարածաշրջանում անբեկանելի առաջնորդության հասնելն էր: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ էր Թուրքիայի և հարևանների միջև (Սիրիա, Հունաստան, Հայաստան, Իրան) առկա խնդիրների՝ Անկարայի համար ընդունելի լուծումներ գտնել: Հետագա քաղաքական գործընթացները, սակայն, փաստեցին, որ նման մոտեցումներն ամենատարբեր գործոնների ազդեցության զորու իրողություն այնուամենայնիվ չեն կարող դառնալ, ու Թուրքիան վերադարձավ իր որդեգրած նախկին գծին՝ գնալով լատենտ, իսկ հետագայում նաև հրապարակային առձակատման ու հակադրության իր մի շարք հարևանների և հատկապես Սիրիայի հետ:

Ամփոփելով՝ նշենք, որ թուրք-սիրիական հակադրության բոլոր բաղադրիչների մասով, ինչպես նաև այդ երկրների փոխհարաբերությունների բոլոր ժամանակներում էլ Սիրիան չի եղել ուժեղ կողմ: Նախ՝ Ալեքսանդրետի սանջակի փոխանցումը Թուրքիային հիմք դրեց հակադրության ձևավորմանը, որն այդպես էլ լուծում չստացավ: Սիրիային ոչինչ չէր մնում անել, եթե ոչ համակերպվել ձևավորված իրողությունների հետ:

<sup>33</sup> Տե՛ս Radikal 09.01.2003

Հաջորդ խնդիրը ջրային հարցն էր, որտեղ Սիրիան նույնպես թույլ կողմ էր: Թուրքիայից ունենալով օբյեկտիվ կախվածություն ջրային ռեսուրսների բաշխման հարցում՝ Սիրիան, որպես ջրային նման քաղաքականության հակաքայլ, Թուրքիայի դեմ օգտագործում էր քրդական ու ոչ քրդական ահաբեկչական խմբավորումների գործունեությունը: Ակնհայտ է, որ դա մեծ հաշվով շոշափելի արդյունքի չէր տալիս, բացի հարևան երկրի հետ հարաբերությունների պարբերական լարումներից: Մյուս կողմից՝ դա Սիրիայի համար առաջ էր բերում միջազգային հեղինակագրկման ռիսկեր. Սիրիան դառնում էր ահաբեկչությանը աջակցող երկիր: Թուրքիայի դեմ Սիրիայի կողմից ահաբեկչական խմբավորումների օգտագործումը ստիպում էր Անկարային տարածաշրջանային մի շարք երկրների ներգրավմամբ հակասիրիական համագործակցային ֆորմատներ ստեղծել: Արդյունքում Դամասկոսի դիրքերը տարածաշրջանում էապես թուլանում էին:

Այս համատեքստում տրամաբանական է, որ գալու էր այն պահը, երբ Թուրքիան դիվանագիտական զինանոցից հրաժարվելու և, որպես խնդրի լուծման տարբերակ, ընտրելու էր ռազմական լուծումը, որին Սիրիան որևէ կերպ պատրաստ չէր: Այսպիսով, կարելի է փաստել, որ տասնամյակներ տևած հակադրությունը, որը գործնականում մինչ օրս էլ շարունակվում է, (քանի որ Թուրքիան ամեն կերպ աջակցում է Սիրիայի քաղաքացիական պատերազմում հակակառավարական ուժերին ու «Իսլամական պետություն» խմբավորմանը) խնդիրների հիմնական մասն այդպես էլ հնարավոր չէղավ կարգավորել: Հակադրության տարբեր փուլերում եղան լարվածության, անգամ նախապատերազմական իրավիճակներ, սակայն խնդիրները խորքային առումով այդպես էլ չլուծվեցին: Ադանայի պայմանագիրն



այդ բարդ ու խնդրահարույց հարաբերությունների միայն մի կարճ ժամանակահատվածի համար ունակ եղավ կայունություն ապահովել: Հետագա գործընթացները փաստեցին, որ 21-րդ դարասկզբին ձևավորված իրավիճակում որոշակի դրական փոփոխությունները և երկու կողմերի միջև գործակցության միտումները փաստորեն միայն ժամանակավոր բնույթ էիր կրելու և թելադրված էին կողմերի (հատկապես Թուրքիայի)՝ այդ պահին անհրաժեշտ շահերի զիտակցումից ու մերձավորարևելյան քաղաքական կոնյուկտուրայից:

## **ADANA AGREEMENT AND TURKISH-SYRIAN RELATIONS BY 2002.**

### **Summary**

*Arsen Julfalakyan*  
*YSU, PHD in Department of International Relations*  
*and diplomacy*

**Key words:** *Turkish-Syrian relations, Syria, Adana Agreement, Kurdish question, PKK*

This article reveals the relations between Turkey and Syria from the end of 20<sup>th</sup> century to the beginning of 21<sup>st</sup> century. The article particularly focuses on the conflicting nature of the bilateral relations due to Kurdish factor and its military-political implications on bilateral and regional levels. The article presents Adana Agreement and political ambiance at which it was signed, assessing the document from the point of view of its consistency with the stakeholders' interests, and analyzing its implications on Turkish-Syrian relations.

## **АДАНСКОЕ СОГЛАШЕНИЕ И ТУРЕЦКО-СИРИЙСКИЕ ОТНОШЕНИЯ ДО 2002 Г.**

### **Резюме**

*Арсен Джулфалакян  
ЕГУ, Аспирант кафедры международных  
отношений и дипломатии*

**Ключевые слова:** *турецко-сирийские отношения, Сирия, Аданское соглашение, курдский вопрос, РПК.*

Данная статья посвящена турецко-сирийским отношениям конца 20-го начала 21-го века. В частности, в статье представлен конфронтационный характер этих отношений, связанный с курдской проблематикой, ее военно-политическими последствиями на двустороннем и региональном уровнях. В статье сделан акцент на Аданском соглашении, политической обстановке/среде подписания Аданского соглашения; дана оценка документа с точки зрения его соответствия интересам сторон соглашения; проведен анализ его последствий на дальнейшие отношения между Турцией и Сирией.